ՀՏԴ: 929: 891.981 Մուշեղյան

DOI: 10.54503/0135-0536-2025.3-298

ԱԼԲԵՐՏ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Ալբերտ Վարազդատի Մուշեղյանը բացառիկ երևույթ էր մեր իրականության մեջ:



Ծնվել է Երևան քաղաքում 1930 թ. սեպտեմբերի 27-ին՝ թիթեղագործ արհեստավորի ընտանիքում: 6 տարեկանում դինամիտի պայթյունի հետևանքով կորցրել է տեսողությունը:

1939–1946 թթ. սովորել է կույր երեխաների 7-ամյա ինտերնատ-դպրոցում, այնուհետև՝ 1946–1949 թթ. ուսումը շարունակել է տեսնողների հետ՝ Մանուկ Աբեղյանի անվան № 3 միջնակարգ դպրոցում, որն ավարտել է Ոսկե մեդալով: 1949–1954 թթ. նա ուսանել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռոմանո-գերմանական բաժնում, որն ավարտել է գերազանցության դիպլոմով: Ուման տարիներին ստացել է Մանուկ Աբեղյանի անվան կրթաթոշակ: 1955–1959 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի արտասահմանյան գրականության ու գերմաներեն լեզվի ասպիրանտուրայում:

1956 թ. չտեսնողների համար ուռուցիկ տառերով գրքերի ու դասագրքերի հրատարակման համար Ա. Մուշեղյանը կազմակերպել է բրայլյան տառերով տպարան և նշանակվել գլխավոր խմբագիր: 1958–1973 թթ. եղել է Կույրերի միավորման բրայլյան ամսագրի հիմնադիր-խմբագիրը, 1963–1975 թթ.՝ բրայլյան հրատարակչության պետը: 1962 թ. Մինիստրների խորհրդի որոշմամբ կազմակերպել է տպագիր և խոսող գրքերի հրատարակություն՝ ձայնագրման ստուդիայով, և նշանակվել հրատարակչության պետ:

1964 թ. ընտրվել է Հայաստանի կույրերի միավորման կենտրոնական վարչության նախագահի 1-ին տեղակալ: 1965 թ. ապրիլից մինչև 1973 թ. վերջը Հայաստանի կույրերի միավորման համագումարի կողմից երկու անգամ ընտրվել է միավորման կենտրոնական վարչության նախագահ:

Ա. Մուշեղյանը, վարչական աշխատանքին զուգահեռ, մշտապես զբաղվել է նաև գրականագիտական գործունեությամբ: Զրկված լինելով տեսողությունից՝ նա իր գիտական ուսումնասիրությունները կատարել է կնոջ՝ բանասեր, թարգմանչուհի Ռիմա Հարությունյանի (1932–1997) օգնությամբ: Իր կոչումը համարելով գիտությունը՝ 1973 թ. վերջին Կույրերի միավորման հերթական համագումարում, շնորհակալություն հայտնելով մասնակիցներին կրկին առաջադրվելու առաջարկության և վստահության համար, հրա-

ժարվել է վարչական աշխատանքից ու փոխադրվել է Գիտությունների ակադեմիա՝ գիտական աշխատանքն ու ստեղծագործական գործունեությունը առավել լիարժեք կատարելու համար:

1974–1978 թթ. Ա. Մուշեղյանն աշխատել է Գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի գրական կապերի բաժնում: 1978 թ. մինչև կյանքի վերջը աշխատել է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում որպես հայ հին և միջնադարյան գրականության բաժնի առաջատար գիտաշխատող:

1979 թ. դարձել է Հայաստանի գրողների միության անդամ, իսկ 1990 թ.՝ Ժուռնալիստների միության անդամ:

1980 թ. Ա. Մուշեղյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Ավետիք Իսահակյանի ուսումնասիրության և ստեղծագործական տարիները Գերմանիայում» թեմայով, և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: 1996 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «5-րդ դարի հայ հին մատենագրության ժամանակագրական խնդիրները» թեմայով՝ ստանալով բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Ա. Մուշեղյանը հեղինակ է շուրջ 100 գրականագիտական և հայագիտական ուսումնասիրությունների՝ նվիրված հատկապես հայ հին գրականության չլուծված խնդիրներին:

Ա. Մուշեղյանը նաև թարգմանիչ էր: Նա տպագրել է գերմաներենից կատարված հետևյալ թարգմանական գրքերը. «Հայնրիխ Հայնե. Գերմանիա, Ձմեռային հեքիաթ» (պոեմ, 1959), «Հայնրիխ Հայնե. Բանաստեղծություններ և գեղոններ» (1983), «Վոլֆգանգ Գյոթե. Վայմարյան քնար» (1985), «Վոլֆգանգ Գյոթե. Բանաստեղծություններ» (1993), «Արմին Թ. Վեգներ. Ճանապարհ առանց տունդարձի» [համահեղինակ՝ Ռ. Մուշեղյան (2000)]:

Այս գրքերից բացի՝ գիտական տարբեր պարբերականներում հրատարակվել են Ա. Մուշեղյանի՝ գերմանական դասական պոեզիայից կատարած թարգմանություններ՝ նաև Յոհան Քրիստոֆ Ֆրիդրիխ ֆոն Շիլլերից, Նիկոլաուս Լենաուից, Յոզեֆ Կարլ Բենեդիկտ Ֆրայհերր ֆոն Այխենդորֆից:

1983 թ. հրատարակվել է Ա. Մուշեղյանի «Ավետիք Իսահակյան՝ վաղ տարիներ» մենագրությունը (300 էջ):

Սակայն անվանի գիտնականն առավել հայտնի էր որպես բանասեր-միջնադարագետ, ով 2007 թ. հրատարակել է «Մովսես Խորենացու դարը» մենագրությունը (412 էջ)՝ բազմաթիվ օտարալեզու հնագույն սկզբնաղբյուրներով: Մենագրության մեջ Ա. Մուշեղյանի եզրահանգումն այն է, որ Խորենացուն «ուշ շրջանի հեղինակ համարելու վարկածը ամբողջովին հակագիտական է և արդյունք՝

ա. հետագա դարերում աշխարհաքաղաքական նոր իրադարձության մեջ ի հայտ եկած նոր անվանացանկի ներմուծման.

բ. միջնադարյան խմբագիրների և գրիչների անիրազեկության.

գ. առանձին պատմական դեպքերի և հասկացությունների վերաբերյալ այսօր պատմագիտությանը և բանասիրությանը անհայտ տվյալների.

դ. քննադատների թույլ տված միտումնավոր խեղաթյուրման, ինչպես և նրանց ունեցած թյուր պատկերացումների»[1]:

[1] *Ա. Մուշեղյան. Մովսես Խորենացու դարը, Երևան, 2007, էջ 18:*

Ա. Մուշեղյանի ուսումնասիրությունը մեկ անգամ ևս հաստատում է, որ հայ միջնադարի գրականության ուսումնասիրման միակ և վստահելի սկզբնաղբյուրը պիտի համարել գրաբար գիտաքննական բնագիրը, որը ևս, ցավոք, չի կարող անխաթար լինել: Այնպես որ՝ մեր պատմիչների հետ կապված վիճելի հարցերը հնարավոր է ճշտել գրաբար լավ իմացող, բնագիրը քննախույզ հայացքով վերլուծող բանասերների ջանքերով: Ա. Մուշեղյանի ուսումնասիրությունն ասվածի փայլուն վկայությունն է, և այն տվել է ցանկալի արդյունք: Այս մենագրությամբ նա լուծում է Մովսես Խորենացու ժամանակի գորդյան հանգույցը:

Ա. Մուշեղյանի ուշադրությանն են արժանացել նաև հայ պատմիչներ Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի կյանքի ու պատմության գրության ժամանակի խնդիրները:

Գրականագետի միջնադարագիտական ուսումնասիրություններից հիշատակման արժանի են մի շարք լավագույն հոդվածներ. «Որտե՞ղ է գտնվել Մովսես Խորենացու հիշատակած Բյութանիան» («Պատմա-բանասիրական հանդես», 1990, №1, էջ 209–228), «Վասպուրական նահանգի հիշատակումը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ» (ՀՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1991, № 5, էջ 3–21), «Կորյուն թե՞ Ագաթանգեղոս (բնագրերի քննություն նոր տեսանկյունից)» (ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1996, № 2, էջ 49–57), «Ագաթանգեղոսի Պատմության գրության ժամանակը և հեղինակի հարցը» («Լրաբեր հասարակական գիտությունների», 1996, № 2, էջ 57–64), «Մեսրոպ Մաշտոցը և նախամաշտոցյան հայ գիրը» («Պատմա-բանասիրական հանդես», 2006, № 2, էջ 210–236), ««Ագաթանգեղոսի պատմությունը». ստեղծման հանգամանքները, գրության ժամանակը և հեղինակի հարցը» («Պատմա-բանասիրական հանդես», 2012, № 1, էջ 196–222), «Եղիշեի Վարդանանց Պատմության և Ագաթանգեղոսի Պատմության բնագրական աղերսը» («Գրականագիտական հանդես», 2013, ԺԴ, էջ 3–18), «Վարդանանց Պատմության հեղինակ Եղիշեն և նրա նոր անձնավորության բացահայտումը» («Էջմիածին», դեկտեմբեր 2013, էջ 1–22), «Վարդանանց Պատմությունը Եղիշեի և Փարպեցու հակընդդեմ մեկնությամբ» («Գրականագիտական հանդես», 2014, ԺԵ, էջ 38–63), «Վարդանանց Պատմության հեղինակ Եղիշեն և նրա անձնավորության նոր բացահայտումը» («Գրականագիտական հանդես», 2015, ԺԶ, էջ 19–45), «Ագաթանգեղոսի Պատմության նախնական հունարեն բնագիրը՝ ստեղծված Տրդատ Մեծի արքունիքում և նրա հեղինակ Դավիթ Հռովմայեցին» (2016 թվի մայիսի 19–20-ին տեղի ունեցած «Արշալույս քրիստոնեության Հայոց» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, 2017, էջ 183–189):

2018 թ. Ա. Մուշեղյանը հիմնել է «Ուրարտագիտության և խորենացիագիտության կենտրոն», որը գրանցված է Արդարադատության նախարարության պետռեգիստրում, քանի որ այդ բնագավառում ունի վերջին 20 տարում ձեռք բերած գիտական վաստակ և արժեքավոր հրապարակումներ:

Ա. Մուշեղյանի հայագիտական, գրականագիտական, թարգմանական վաստակն արժանիորեն գնահատվել է. նա պարգևատրվել է՝ ՀԳՄ «Գրական վաստակի համար» մեդալով (2009), Մանուկ Աբեղյանի անվան Արծաթե մեդալով (2009), ԵՊՀ Ոսկե մեդալով (2010), ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով (2014), ՀՀ կրթության և գիտության նախարարության Ոսկե

մեդալով (2016), ՀՀ գիտության պետական կոմիտեի Ոսկե մեդալով (2016), Մովսես Խորենացու մեդալով (2020):

Բանասեր-գիտնականի նրա ֆենոմենը ինձ համար առայսօր մնում է անբացատրելի: Երբ խմբագրում էր իմ գրքերից մեկը՝ Գրիգոր Ակներցու պատմության աշխարհաբար փոխադրությունը, հեռախոսով կարդում էի գիրքը, իսկ խմբագիր Ա. Մուշեղյանը լուռ ունկնդրում էր: Երբ բավականին առաջ էի գնացել, հանկարծ ընդհատեց ու ասաց. «Ետ գնա 20 էջ, կարդա հետևյալ տողը և ուղղիր այս բառը»: Ես ապշեցի՝ բացահայտելով նրա հիշողության անսահման հնարավորությունները:

Բոլորելով իր կյանքի 95-ամյակը՝ Ալբերտ Մուշեղյանը հրաժեշտ տվեց երկրային կյանքին՝ մնալով հայագիտության հավերժի ճամփորդներից մեկը:

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Բ. գ. դ., պրոֆ., ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին և միջնադարյան գրականության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հին և միջնադարյան գրականություն, բնագրագիտություն՝ գրաբար բնագրերի փոխադրությամբ, բանագիտություն, արդի հայ գրականություն ու գրական քննադատություն: Հեղինակ է 33 գրքի և 100-ից ավելի հոդվածի: ORCID: 0009-0006-3176-8436.
vano.exiazaryan@mail.ru